ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ 1995 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼ 3-8 ԳՈՒՄԱՐՎԵԼԻՔ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՆՊԱՏԱԿ՝ Ժողովավարական գործընթացի մասին Գերագույն Հոգևոր Խորհուրդը թելադրում է, որ հետևյալ ժողովավարական օրենքները ընդունվեին Ազգային Եկեղեցական Ժողովի կողմից:

ՍՏՈՒԳԻՉ/ՔՎԵԱԽՈՒԶ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ՝ Գերագույն Հոգևոր Խորհուրդը առաջարկում է յոթը անձերից բաղկացած Ստուգիչ/Քվեախուզ Հանձնախումբ. յոթից մեկը ծառայում է որպես Հանձնախմբի ատենապետ: Հանձնախմբի անդամները նշանակվում են աշխարհագրական տարբեր շրջաններից՝ երկու հոգի Հայաստանից՝ Ասողիկ Եպիսկոպոս Արիստակեսյան և Աշոտ Ոսկանյան, մեկական հոգի Ռուսաստանի տարածքից՝ Եզնիկ Մ. Վարդապետ Պետրոսյան, Ամերիկյան զույգ ցամաքամասերից՝ Հովնան Արքեպիսկոպոս Տերտերյան և Հակոբ Եպիսկոպոս Գըլըջյան, Միջին և Մայրագույն Արևելքից՝ Աղան Արքեպիսկոպոս Բալիոզյան, և Եվրոպայից՝ Մեսրոպ Արքեպիսկոպոս Գրիգորյան:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ Ազգային Եկեղեցական Ժողովից առաջ յուրաքանչյուր պատգամավոր պարտավոր է արձանագրվել Ստուգիչ Հանձնախմբի մոտ և ստանալ կրծքանշան /կամ կրծքաժապավեն/:

ՆԱԽԱԳԱՀ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսական Տեղապահը նախագահում է Ազգային Եկեղեցական Ժողովին՝ մինչև կաթողիկոսի ընտրությունը: Նորընտիր Կաթողիկոսը ստանձնում է նախագահությունը և ազատ է արձակում ժողովը: Նախագահը կատարում է Ազգային Եկեղեցական Ժողովի բացումը:

ԱՌԺԱՄՅԱ՝ Մինչև Դիվանի ընտրությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի Ատենապետը և Ատենադպիրը ծառայում են որպես Առժամյա Դիվան Ազգային Եկեղեցական Ժողովին՝ յուրաքանչյուրը իր պաշտոնի սահմաններում:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ՝ Ազգային Եկեղեցական Ժողովի պատգամավոր են՝

ա) Հայաստանյայց Եկեղեցու բոլոր Արքեպիսկոպոսներն

ու Եպիսկոպոսները, որոնք անդամ են Մայր Աթոռի Միաբանության,

բ) Գերագույն Հոգևոր Խորհրդի աշխարհական անդամները,

գ) Նվիրապետական Աթոռների կողմից նշանակված պատգամավորները,

դ) Յուրաքանչյուր թեմի կողմից ընտրված պատգամավորները:

ՔՎՈՐՈՒՄ՝ Ազգային եկեղեցական ժողով գումարելու համար՝ բոլոր պատգամավորների կեսից մեկ ավելիի ներկայությունը կազմում է քվորում:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ՝ Որոշումները ընդունվում են ներկա գտնվող պատգամավորների մեծամասնության ձայնով և քվեարկությամբ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝ Ներկա գտնվող պատգամավորները միայն կարող են քվե տալ: Յուրաքանչյուր պատգամավոր ունի միայն մեկ ձայնի իրավունք: Անձնափոխանորդի միջոցով չի կարելի քվեարկել պատգամավորին արձանագրելուց հետո: Անձնափոխանորդը չի արտոնվում ժողովին ներկա գտնվել: Ընտրությանց պարագային քվեարկությունը կատարվում է գրավոր: Որոշումների և այլ հարցերի պարագային քվեարկությունը կարելի է կատարել ձեռք բարձրացնելով:

ԴԻՎԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ՝ Գերագույն Հոգևոր Խորհուրդը ներկայացնում է երկուական անուններից բաղկացած ընտրական քվեաթերթ Ատենապետի, Փոխ-Ատենապետի, Ատենադպրի և Փոխ-Ատենադպրի պաշտոնների համար: Ժողովից առաջարկված անուններ ևս կարելի է ավելացնել ցանկի վրա՝ մեծամասնության ձայնով: Այս գործընթացի միջոցին քննարկում տեղի չի ունենա:

ՔՎԵԱԹՈՒՂԹ՝ Քվեաթղթերի վրա անունները պետք է գրվեն երեք այբուբեններով՝ հայերեն, լատիներեն և ռուսերեն:
Դիվանի ընտրության համար ստուգիչ Հանձնախումբը պատգամավորներին քվեաթերթեր բաժանելուց հետո, հրավիրում է նրանց մեկ առ մեկ, որպեսզի յուրաքանչյուրը

տա իր քվեն:

Քվեաթղթի վրա հստակ պետք է նշվի, որ քանի անձի քվե պիտի տրվի: Այն քվեները, որ տրված հրահանգներին չեն համապատասխանում, անվավեր են համարվում:

ՔՎԵՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ՝ Ստուգիչ Հանձնախումբը հաշվում է քվեները, որոնց արդյունքները հայտնում է նախագահին, որը իր հերթին հաղորդում է այդ տեղեկությունը Առժամյա Ատենապետին՝ հրապարակորեն հայտարարելու համար:

Դիվանի ընտրությունից հետո՝ Նախագահը հրավիրում է նորընտիր դիվանի կազմը, որ իր տեղը գրավի:

ՕՐԱԿԱՐԳ՝ Գերագույն Հոգևոր Խորհուրդը պատրաստում է Ազգային Եկեղեցական Ժողովի օրակարգը և ներկայացնում է այն ժողովին որպեսզի ընդունվի: Պատգամավորը իրավունք ունի օրակարգում նոր առաջարկություններ անելու:

ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐ՝ Ատենապետը Դիվանի հետ խորհրդակցաբար նշանակում է երեք անձեր, որ օրինական հարցերի վերաբերյալ խորհուրդ տան իրեն:

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ՝ Ատենապետը Դիվանի հետ խորհրդակցաբար նշանակում է մի Հանձնախումբ, որ հսկի կարգապահությունը:

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ՝ Ատենապետը Դիվանի հետ խորհրդակցաբար նշանակում է Գնահատանքի Հանձնախումբ:

ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ՝ Պառլամենտական գործընթացի կարգ ու կանոնները գործադրվում են հետևյալ կերպ՝

ա) Պատգամավորները խոսք են ստանում այն ժամանակ երբ Ատենապետը խոսելու իրավունք է տալիս իրենց:

բ) Ելույթի համար ամեն մի պատգամավորին տրվում է 1-3 րոպե, իսկ հայտարարության համար միայն 1,5 րոպե:

գ) Պատգամավորներին տվյալ հարցի համար

արտահայտվելու միայն մեկ անգամ է պատեհություն տրվում:

դ) Խոսողները իրենց խոսքը ուղղում են միայն Ատենապետին և չեն վիճաբանում կամ խոսակցում այլ պատգամավորների հետ:

ե) Պատշաճ ձևով և լեզվով պիտի լինի խոսակցությունը:

զ) Հարցերի բավարար քննարկումից հետո՝ Ատենապետը կարող է վիճաբանության համար որոշ ժամանակ սահմանել:

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ՝

ա) Գերագույն Հոգևոր Խորհուրդը ներկայացնում է ցանկը երեք Նվիրապետական Աթոռների Գահակալների և Մայր Աթոռի միաբանության անդամ բոլոր Արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների՝ որպես կաթողիկոսի ընտրության թեկնածուներ:

բ) Կաթողիկոսի ընտրության քվեաթղթերի վրա անունները տեսք է գրվեն երեք այբուբեններով՝ հայերեն, լատիներեն և ռուսերեն: Ստուգիչ Հանձնախումբը պատգամավորներին հրավիրում է մեկ առ մեկ: Ցուրաքանչյուր պատգամավոր իր անունը ստորագրելուց հետո արձանագրության տոմարի մե՛ջ ստանում է քվեաթերթը: Ամեն մի քվեաթերթ նախքան պատգամավորին տրվելը պետք է կնքվի Ստուգիչ Հանձնախմբի Ատենապետի կողմից և ստորագրվի Հանձնախմբի այլ երկու անդամների կողմից: Պատգամավորը կնքված և ստորագրված քվեաթուղթը ստանալուց հետո, պատեհություն ունի իր քվեն արձանագրելու և այն քվեատուփի մեջ նետելու:

գ) Առաջին քվեարկությամբ ընտրվում են երեք թեկնածուներ, որոնց անունները պիտի երևան քվեաթերթի վրա: Պատգամավորները պարտավոր են քվեարկել միայն մեկ անձի և բարձրագույն քվե ստացող երեք անձերը նկատվում են թեկնածուներ, որոնց անունները պիտի երևան պաշտոնական քվեաթերթի վրա:

դ) Երկրորդ քվեարկությամբ ընտրվում է Կաթողիկոսը եռանուն ցանկից: Պատգամավորները պարտավոր են քվեարկել մեկ անձի միայն:

ե) Նա, ով կստանա քվեի մեծամասնությունը, կնտրվի Կաթողիկոս:

զ) Եթե թեկնածուներից որևէ մեկը չի ստանում քվեի մեծամասնությունը, երկրորդ քվեաթերթ է պատրաստվում, հանելով նվազագույն քվե ստացողի անունը:

ԱՐՁԱԿՈՒՄ՝

Ընտրյալ Կաթողիկոսը ստանձնում է նախագահությունը ժողովի և արձակում է այն:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ՝

Գերագույն Հոգևոր Խորհուրդը Ազգային-Եկեղեցական Ժողովին մի որոշում է ներկայացնում՝ հանձնարարելու նոր Կաթողիկոսին իննսուն օրվա ընթացքում նշանակի Սահմանադրական մի Հանձնաժողով՝ սահմանադրության նախագիծ կազմելու և դիտողությունների համար շրջանառության մեջ դնելու այն և երկու տարվա ընթացքում Ազգային-Եկեղեցական մի նոր Ժողով գումարելու, որի միակ նպատակը պետք է լինի քննել հիշյալ սահմանադրության նախագիծը:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ՝

Ազգային-Եկեղեցական Ժողովը առաջարկում է նորընտիր Կաթողիկոսին՝ որպեսզի նշանակի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին մինչև Սահմանադրության ընդունումը: